Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 1037 - Ա որոշման

«ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ»
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Ծաղկաձորի ամառային ճամբարում անվճար հանգստանում, կրթվում և դաստիարակվում են անապահով ընտանիքների 1000 երեխաներ՝ Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև՝ Վրաստանի Ախալքակի և Նինոծմինդա քաղաքներից և նրանց հարակից հայաբնակ գյուղերից: Ակտիվ հանգստի հետ միասին երեխաները ուսանում են երգ, պար, օտար լեզուներ, նկարչություն, ձեռագործ, համակարգիչ և այլն, ինչպես նաև մասնակցում են թատերականացված ներկայացումների, զվարճալի ու ինտելեկտուալ խաղերի, սպորտլանդիաների: Կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Սևան, Հաղարծին, Մատենադարան և այլուր: Ճամբարի ընթացքում երեխաներին անվճար բաժանվում են հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Ձինիշյան Հիշատակի» հիմնադրամ (Հայաստան, Երևան, Աբովյան 34, բն. 5) – տարեկան 4,850,000 դրամ «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպություն (E.V.2/Domberg 273, Deutschland) – տարեկան 8,500,000 դրամ «Օվղը Դ՛Օրիան» բարեգործական կազմակերպություն (3 avenue de la Gare, 35600 Redon, France) – տարեկան 8,000,000 դրամ «Քինդեր Միշընսվերք» բարեգործական կազմակերպություն ("Die Sternsinger" e.V. Stephanstraße 35 52064 Aachen, Germany) – տարեկան 5,500,000 դրամ «ՔՆԵՎԱ Նյու Յորք» բարեգործական կազմակերպություն (1011 First Avenue New York, N.Y. 10022-4195, USA) – տարեկան 5,000,000 դրամ Ֆրանցիսկ Քոֆլեր (2 Wilhelm Str. 93, 50321 Bruehl, Germany) – տարեկան 7,000,000 դրամ

		«Ասոսասիոն Այյանս Արմենիեն» բարեգործական կազմակերպություն (10B Rue Thouin 3, Paris, France) - տարեկան մոտ 12,500,000 դրամ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)» (1060 First Avenue, Suite 400 King of Prussia, PA 19406, USA) – տարեկան 22,000,000 դրամ Անի Ճուհերեան (10 rue Lavoisier 75008 Paris, France) – տարեկան 19,000,000 դրամ «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամ (State Route 66 FL-4-2 Tinton Falls, NY USA) – տարեկան 15,000,000 դրամ «Կիրխ ին Նոթ» բարեգործական կազմակերպություն (Lorenzonistraße 6281545 Munich, Germany) - տարեկան 10,550,000 դրամ Ֆերիդ Թեջիմեր (100 Northdale RoadToronto, Ont. M2L 2M1, Canada) - տարեկան 7,500,000 դրամ Եղբայր Էլուա Հաննոն (Prieuré Notre Dame du Cénacle 5 bis rue du Prieuré,03260 Saint Germain des Fossés, France) - տարեկան 3,000,000 դրամ
4	Ծրագիրը կատարողը	Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության (հասցե՝ Գյումրի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ 05513266):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» ճամբարում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն է 385՛200’000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Շիրակի և Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերի, Երևանի, ինչպես նաև Վրաստանի Ախալքակի և Նինոծմինդա քաղաքների և նրանց հարակից հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների 6-ից 16 տարեկան 1000 երեխաներ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	➢ ճամբարի մասնաշենքերի վերանորոգումներ և վերակահավորումներ - տարեկան 60,000,000 դրամ և 180,000,000 դրամ 3 տարվա համար ➢ ճամբարի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր - տարեկան 9,500,000 դրամ և 28,500,000 դրամ 3 տարվա համար ➢ ճամբարի իրականացման համար անհրաժեշտ սննդի, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների, սպորտային գույքի, հագուստեղենի և կոշկեղենի - տարեկան 38,000,000 դրամ և 114,000,000 դրամ 3 տարվա համար ➢ ճամբարի գործունեության, ինչպես նաև ճամբարականներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում (հիգիենիկ և տնտեսական պարագաներ, գրենական պիտույքներ, կահույք)- տարեկան 20,000,000 դրամ և 60,000,000 դրամ 3 տարվա համար ➢ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան 900,000 դրամ և 2,700,000 դրամ 3 տարվա համար;
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	➢ Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝ ➢ տարեկան 60,000,000 դրամ ճամբարի մասնաշենքերի վերանորոգումների և վերակահա-վորումների համար և 180,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 5,000,000 դրամ գազի համար և 15,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 2,500,000 դրամ էլեկտրաէներգիայի համար և 7,500,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 1,000,000 դրամի ջրամատակարարման և ջրահեռացման համար և 3,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 1,000,000 դրամ հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար և 3,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 3,000,000 դրամ տնտեսական ապրանքների և պարագաների, ինչպես նաև գրենական պիտույքների համար և 9,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 35,,000,000 դրամի սննդամթերքի համար և 105,000,000 դրամ 3 տարվա համար, ➢ տարեկան 20,000,000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 60,000,000 դրամ 3 տարվա համար,

		➢ տարեկան 900,000 դրամ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 2,700,000 դրամ 3 տարվա համար:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր-պական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության և Ծաղկաձորի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատա-կով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ